ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. № 1 , ԿԱՅԱՅԱԾ 22.03.2018Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
_____ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա) խրախուսում և ապահովում է ուսանողների ու Ակադեմիայի աշխատակազմի ակադեմիական ազնվությունը:

Կրթական միջավայրն այն տարածքն է, որտեղ վերլուծվում, քննարկվում, դաստիարակվում և տարածվում են «ազնվությունը», «արդարությունը», «հարգանքը» և մյուս բարոյական նորմերն ու արժեքները: Ուստի, դասավանդողները՝ որպես «կրթողներ» և ուսանողները՝ որպես «կրթվողներ», իրենց գործունեության միջավայրում կրում են ազնիվ վարվելակերպի պահպանման պարտականությունը:

Ակադեմիական ազնվությունն անհրաժեշտ է Ակադեմիայի բարի համբավը պահպանելու, աշխատակազմի և ուսանողների իրավունքները պաշտպանելու համար:

Սույն հայեցակարգը և Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները համարվում են Ակադեմիայի ակադեմիական ազնվության քաղաքականության հիմնական փաստաթղթերը:

Աշխատակազմի յուրաքանչյուր անդամ իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրության, կանոնակարգերի, սույն հայեցակարգի և իր աշխատանքային պայմանագրով սահմանված գործառույթներին համապատասխան:

Ակադեմիայի յուրաքանչյուր ուսանող իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Ակադեմիայի ներքին կանոնակարգերի, սույն հայեցակարգի, և իր՝ Ակադեմիայի հետ կնքած պայմանագրի համապատասխան:

Դրանցում ամրագրված նորմերի խախտումները համարվում են արգելված վարքի դրսևորումներ:

Ակադեմիական անազնիվ վարքի դրսևորումներ են ստելը, խարդախելը, անհարգալից վերաբերմունքի դրսևորումները, կեղծելը, կաշառելը, գրագողությունը, արգելված աջակցությունը, պաշտոնական դիրքի չարաշահումը և ակադեմիական անազնվություն համարվող ցանկացած այլ վարք:

Աշխատակազմի և ուսանողական համակազմի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում համալսարանում ազնվության հայեցակարգի խախտման համար, պարտավոր է հետևել ՀՀ օրենքների պահանջներին, բարոյականության նորմերին և սույն փաստաթղթում ներկայացված ակադեմիական ազնվության սկզբունքներին:

Հայեցակարգի սկզբունքներն են.

1) օրինականության ապահովում,
2) սոցիալական արդարության ապահովում,
3) թափանցիկության ապահովում,
4) հրապարակայնության ապահովում,
5) որակյալ կրթության ապահովում,
6) կրթություն առանց կոռուպցիայի:

Հայեցակարգի խնդիրներն են.

1) ձևավորել և խրախուսել ակադեմիական ազնվության մշակույթն Ակադեմիայում,
2) պահպանել Ակադեմիայի բարի համբավը,
3) կանխել ՀՀ օրենքների խախտման, հովանավորության, կաշառք տալու, ստանալու, կաշառքի միջնորդության, շորթման, կոռուպցիոն այլ երևույթների և ակադեմիական անազնվության ցանկացած այլ դեպք:

«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»

Ռեկտորի հրամանով ստեղծվում է Ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ 1 տարի ժամկետով: Հանձնաժողովի կազմը բաղկացած է 3 կամ 5 անդամից (ուսանողի խնդիր քննարկելու դեպքում պարտադիր 5 անդամ, որից 2-ը ուսանող՝ ներկայացված Ուսանողական խորհրդի կողմից):

Հայեցակարգի դրույթների խախտման դեպքում պետք է դիմել ռեկտորին՝ գրավոր կերպով ներկայացնելով կարգի կամ դրույթի խախտումը: Ռեկտորի հանձնարարությամբ հանձնաժողովի նախագահը հրավիրում է նիստ՝ ուսումնասիրելու ակադեմիական անազնվության դեպքը: Պարզաբանելով դեպքի էությունը՝ հանձնաժողովի նախագահն արձանագրությունը գրավոր ներկայացնում է ռեկտորին: Ռեկտորը 5 աշխատանքային օրվա ընթացքում կողմերին ծանուցում է որոշման մասին:

Խախտող կողմը կարող է որոշումը բողոքարկել 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի որոշումները հաստատվում են Ակադեմիայի ռեկտորի հրամանով: Կախված ակադեմիական անազնվության խախտման դեպքից՝ ուսանողը կամ աշխատակիցը կարող է ստանալ գրավոր/բանավոր նկատողություն կամ հեռացվել բուհից:

Յուրաքանչյուր ուսանող և աշխատակից պարտավոր է տեղեկանալ սույն հայեցակարգի սկզբունքներին և պահպանել դրանք: